

անկախ թղթի վրա գրում էին ինչ-որ այլանդակ նշաններ ու բառեր, որը կոչվում էր «թալիսման»։ Թալիսմանը տալիս էին հիվանդին, որի մի մասը նա պիտի ցրով խմեր կամ ծխեր, մնացածն էլ կարևոր շուրթի մեջ և վզից կախեր։

Չար աչքից ռոնվածին բուժում էին դանազան աղսթրներով ու կախարդանքներով։ Աղոթքը կատարում էր այդ դործին «հմուտ» պառավը։ Նա սեռակոթ դանակով կամ շաքարի կաոթով (շարունակ հորտնջելով) խաչակնքում էր հիվանդի երեսը. երեք անգամ «հայր մեր» էր արտասանում և բույում անկամ «չար աչքը տուաքի» բառերը։ Եթե հիվանդն էլ պառավի հետ միասին սկսում էր հորանջել և աչքերից առատ արցունք էր վաղում, դա նշանակում էր, որ աչք սովողը կին է, և հիվանդը շուտով կստողջանա։

ԱՂՈԹՔ ՉԱՐ ԱՉԳԻՑ ԲՈՒՆՎԱԾԻ ՀԱՄԱՐ.

1. Աղոթեմ ութը մատով,
Աստվածամոր քաղցր կաթով,

Պապիս բժշկարանով,
Սե օձը կթան,
Առանց մերանի մերան,
Մերը կերավ, կես իլավ,
Աղջիկը կերավ ու փքվավ,
Առ սեակոթ դանակը,
Մտի Աղամը գրախտը,
Իմ թանկագին (անունը),
Կարի հտնի չար աչքը,
Չար փուշն ու նախանձը։

2. Աստվածամեր կույսն ես,
Մեղավորայ հույսն ես,
Հիվանդի համար բարեխոսի
Ի սեր տյառն Քրիստոսի,
Չարը խափանի, բարին աչողի,
Մեր քուրք Տիրամեր,
Ամեն,

ՂԶԼԱՐԻ ՀԱՅԵՐԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Թաատերական սիրողական խումբը Ղղարում դադարեցրել է ունեցել մոռավորապես XIX դ. 60-ական թվականներից, երբ Ղղարում ապրում և դործում էին այնպիսի ականավոր հասարակական գործիչներ, ինչպիսիք էին բժշկասկսա Ռոմանոս Միշկելյանը, բժիշկներ Անանիա Սուլթանյանը, Վ. Սամբուլյանը, բանաստեղծ Հովհ. Քուլուբեկյանը, Գեորգ քահանա Մկրտումյանը, քաղաքացու Պապուր Մամաջանովը, վանքի եկեղեցու երեցվորի Ոսկան Քալանթարյանը, քաղաքային գումայի անդամ Հ. Մեհրաբյանը, բժիշկ Մարտիրոս Դուրյանը, նրա կինը՝ տիկին Շուշանը և գուստրը՝ օրիորդ Աշխենը, Իդմիրյանները, Գալստյանները, հայ բարեգործական ընկերությունն և նախագահ Գապար Աղաբալյանը և ուրիշներ։

1880-ական թվականներին Ղղարի թատերական սիրողական խմբի ղեկավոր գործիչներն էին Վարդան Մանուկյանը, Գեորգ Ավենիսյանը, Սուլթանյանը, Անդրեաս Ֆիլիյանը, Գեորգ քահանա Մկրտումյանը, վերջինս խմբի ղեկավարն ու հուշարարն էր, նրա կինը՝ Սոֆին (Ասլամաղյան)։ Սիրողական խմբում սկզբում կանացի դերակատարներ չկային, նրանց դերը կատարում էին տղամարդիկ։ Սակայն ժամանակի ընթացքում այդ դժվարությունն էլ հաղթահարվեց։ XX դ. առաջին

առանձնավորում։ Ղղարն արդեն ուներ փորձված թատերական խումբ։ Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, Ղղարի հայկական թատերական խումբը նոր եռանդով ու խանդավառությամբ սկսեց աշխատել իր հայրենի քաղաքում և կարճ ժամանակում հասավ խոշոր հաջողությունների։

1920 թ. սիրողների այդ խմբում առաջ են քաշվում երիտասարդ, նոր ընդունակ ուժեր։ Փոխվում է խաղացանկը։ Բեմադրվում են ոչ միայն դրամաներ ու կոմեդիաներ, այլև օպերաներ՝ հայկական և ռուսական։ Սիրողների թատերական խմբը դարձավ հայոց լեզվի ամրապնդման յուրօրինակ դպրոց։ Այստեղ երիտասարդները կարճ ժամանակում հասան այնպիսի հաջողությունների, որ խմբի ղեկավարությունը վրասահորեն նրանց հանձնարարում էր պատասխանառու դերեր։ Օրինակ՝ Գեորգ Հակոբյանը, որ մինչև խումբ մանկել հայերենից դրեթե անգրագետ էր, մեկ աաըում սովորեց հայերեն գրել և կարդալ, հաջողությամբ կաաարել դանազան դերեր։ Նույնը կարելի է սսել երգչուհի Հովսեփյանի և շատ ուրիշների մասին։

Բեմիսոր չեն ունեցել, բեմական արվեստ և շատ րաներ նրանք սովորել են հայ հայտնի դերա-

սաններից, որոնք ժամանակ առ ժամանակ հյուրախաղերով եղել են Ղզլարում:

Սիրողների խմբի համար անսահման ուրախություն էր, երբ Ղզլար էին ժամանում հռչակավոր դերասաններ Սիրանուշը, Հ. Արելյանը, Վ. Փափազյանը, Աբուս Ոսկանյանը, Գ. Սվեայանը, Ջարիֆյանը, Արմենյան ամուսինները և շատ ուրիշներ:

1922 թ. ամռանը խումբն առաջին անգամ ներկայացնում է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան՝ Գեորգ Մկրտումյանի բեմադրությամբ: Դերերը կատարում են. Անուշ՝ Վաղդուհի Հովսեփյան, Սարո՝ Գ. Մկրտումյան, Մոսի՝ Գ. Հակոբյան, Անուշի մոր դերը՝ Օվս. Փարեմուլյան:

«Անուշին» հաջորդում է «Աշուղ Ղարիբ»



25. Բաստերասիրական խումբը 1927 թ. Կենտրոնում նստած է ժողովրդական արտիստ, ուսուցիչ Արմեն Արմենյանը:

Սկսած 1924 թ. Ղզլարի թատերական խումբն այնքան է առաջադիմում, սր Աստրախանի հայ կուլտուրական ընկերության հրավերով հյուրախաղերի է մեկնում Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերը՝ Աստրախան, Գրոդնի, Արմավիր, Վլադիկավկազ (Օրջոնիկիձե): Խմբի ներկայացումները, մասնավորապես օպերետները, կատարվում էին երաժշտական նվագակցությամբ: Նվագախմբի ղեկավարն էր երիտասարդ կոմպոզիտոր Նիկիտ Մկրտչյանը, իսկ երգչախմբինը՝ Գ. Մըկրտումյանը:

դրամա-օպերան: Աշուղ Ղարիբի դերում խաղացել է Գ. Գևորգյանը:

Այնուհետև բեմադրվել են կտորներ ուսական և եվրոպական օպերաներից՝ ուսերեն, հավածներ Զայկովսկու «Եվդենի Օնեգինից» և Օֆենբախի «Չքնաղ Հեղինեից»:

Թատերախմբի բաղադրյալ դերասաններից աչքի էր ընկնում Գալուստ Կորյունի «Պանդուկ»-յանը: Նրա խաղացած կոմիկ դերերից էին՝ Միպլի Մառտիր «Նամուսի» մեջ, Պաղտասար աղարար՝ համանուն պիեսում, Արիստոտ աղան («Մեծա-

պատիվ մուրացկաններ», Պըլ-Պուդի՝ համանուն պիեսում, Արշակը՝ ապուշի ղեռում (սուշ լինի, սուշ լինի), Գիթ Սխոն (սուշու Ղարիբը երաժշտական գրամատում, Սուլթան բեկը (սուշին մալ ալան» օսկերայում), հոջա նասրեզզինը՝ համանուն յդիսում և այլն:

Խմբի շնորհայի անդամներից է եղել նաև Վարդուհի Հովսեփյանը, որը մասնակցել է Ղզլարի թատերական բուր Ներկայացումներին:

Երգիչներից աչքի է ընկել Գեորգ Հակոբյանը: Ղզլարի թատերախմբի մշտական կազմը 1920 թվականից մինչև 1930 թվականը հետևյալ պատկերն ունեւր: Տղամարդիկ՝ 30, կանայք՝ 18:

Ըստ վրտումների թատերախմբի կազմը բաժանվում էր՝ տանակին՝ 14, ծառայող՝ 13, ալգեգործ՝ 6, ուսուցիչ՝ 7, հաշվաււււււ՝ 6, փոստի ծառայող՝ 1, գրագրանաււււր՝ 1:

Խմբի աչքի ընկնող կատարողներից էին. Ավետիսյան Մարգոն, Հակոբյան Սոֆիկը, Հովսեփյան Վարդուհին, Մելիքսեթյան Վարդիթերը, Պաննուլալյան Շուշանիկը, Տեր-Պողոսյան Վաղդուհին, Փարսմուլյան Օվսաննան, Ալեքսանյան Գիւլորդը, Դոստանյան Լեոնը, Հակոբյան Գեորգը, Մկրտումյան Գեորգը, Յուրբաշյան Հարությունը, Պաննուլալյան Գալուստը, Զանշուղալյան Գալուրը, Փարսմուլյան Սարգիսը, Ֆարրիկյան Նիկողոսը: Մեներգչուհիներ էին Հովսեփյան Վաղդուհին, Մեղնիկյան Իսկուհին, Զանշուղալյան Աննան և Փարսմուլյան Օվսաննան: Մեներգիչներ՝ Բալանգուրյան Ռոմանոսը, Հակոբյան Գեորգը, Ղարիբյան Գարսը, Մեղնիկյան Բաղդասարը, Մկրտումյան Գեորգը:

Թատերախմբի խաղացանկի մեջ մտնում էին դրամաներ, կատակերգություններ և վոդեվիլներ՝ մոտ 50 անուն:

Խաղացված դրամաներից և կապակերգություններից հիշատակության արժանի են Սարաշյանի «Աշխաճի գասաստանը», Պարոնյանի «Պաղտասար Աղբար», «Արեւելյան Աստուծա-

բուծ», Դենների «Երկու որը», Սագարելիի «Խուսում», Ս. Թառյանի «Թաթնված կաթնը», Ուտիի «Երկու սերժանտ», Ալ. Արեւելյանի «Հայրս», Սարինգերգի «Մարվող ճրագներ», Ա. Շիրվանդագի «Նամուս», Տար ոգի», «Պատվի համար» և «Մորգտնի լանամին», Գ. Սունգուկյանի «Պեպո», «Գիշերվտ սարը խեր ա», Մուրիերի «Ակապենի արարքները», Դրեյերի «17 տարեկաններ» և այլն:

Օպերետներ՝ Ալ. Արեւելյանի «Սուշ լինի, սուշ լինի», «Հարեմի գաղտնիքները», «Պըլ-Պուդի», Հաջիբեկովի «Լեյլի-Մեշնուն», «Խոջա նասրեզզին», «Օ. օյմասըն, բու օլսըն», Գ. Պաննուլալյանի՝ «Ամսոն Վարդապետի հարսանիքը»:

Օպերաներ՝ Ա. Տիգրանյանի «Անուշը» և «Աշուղ Ղարիբ» երաժշտական գրամատ-նեթիաթը՝ Գ. Պաննուլալյանի մշակմամբ:

Մի քանի հատված Զայկովսկու «Եվգենի Օնեգին»-ից և Ռուրինշտեյնի «Դենն»-ից:

Աղջիկների երգչախումբը: 1921 թվականից Ղզլարի հայ թատերախմբին և կուլտուրական ընկերությանը կից ղոյություն ունեւր նաև հայ աղջիկների երգչախումբը, որի կազմակերպողն ու ղեկավարն էր երգիչ Գ. Մկրտումյանը: Խումբը բաղկացած էր 15 հոգուց:

Երգչախումբն իր երգերով ու հայկական պարերով հանգես էր գալիս ղանաղան համերգներում, որոնք կազմակերպվում էին հայ կուլտուրական ընկերության կամ թատերախմբի կողմից: Համերգները տեղի էին ունենում հայկական թատրոնում կամ քաղաքային ակումբում: Երգչախմբի երգացանկի մեջ էին մտնում հայկական և ուսական ժողովրդական երգեր, նրանք մասնակցում էին նաև թատերական ներկայացումներին:

Աղջիկների խումբն ունեւր մեներգչուհիներ, որոնցից նշանավոր էին Իսկուհի Սամարյանը (օրիորդական աղգանունը՝ Մեղնիկյան), որը ներկայումս ապրում է Երևանում, Աննա Մովսիսյանը (օրիորդական աղգանունը՝ Զանշուղալյան):

ՂԶԼԱՐՅԻ ՀԱՅ ՆՃԱՆԱՎՈՐ ԴԵՄՔԵՐ

Գեորգ Քանանյանց (1834—1897): Գեորգ Իւիայի Քանանյանցը (Քանանով) ծնվել է Ղզլարում (վախճանվել է Մոսկվայում): Միջնակարգ կրթությունն ստացել է Ատալրոպոլի գիմնազիայում: 1858 թ. նա ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվարանական ֆակուլտետը և

անմիջապես աշխատանքի նշանակվել համալսարանում՝ որպես պատմության ամբիոնի դասախոս: 1861 թ., երբ հայտնի հայագետ Մ. Էմինը հրաժարվեց Լաղարյան ճեմարանի վերահսկիչ պաշտոնից, առաջարկվեց Քանանյանցի թեկնածությունը: Վերատեսչի պաշտոնում նա ծառայեց

20 տարի, որից հետո նշանակվեց նույն ճեմարանի տեսուչ: Այդ պաշտոնում նա մնաց մինչև իր կյանքի վերջը:

Քանանյանցի գործունեության տարիներին լազարյան ճեմարանում տեղի ունեցան մի շարք բարեփոխումներ՝ դիմնագիական դասարանների կողքին հիմնվեցին հատուկ արհեստի կուրսեր՝ բարձրագույն դպրոցների իրավունքներով, հայոց լեզուն դարձավ պարտադիր հայ երեխաների համար, որոշվեց նաև, որ ճեմարանի տեսուչը կամ վերատեսուչը ծագումով անպայման հայ լինի:

Նա լազարյան ճեմարանը գիտում էր որպես հոգեոր կյանքի և կուլտուրական զարգացման կարևոր գործոն հայ ազգի համար: Քանանյանցի մահից հետո լազարյան ճեմարանում հիմնվեց նրա սինվամը թողակ:

Գ. Քանանյանցի հրատարակել է մի շարք գիտական աշխատություններ:

Իր ճեմարանական գործունեության ժամանակ Գ. Քանանյանցը սերտ հարաբերությունների մեջ էր հայ ականավոր գործիչներից շատերի հետ, որոնցից էր և բանասահգծ Ռաֆայել Պատկանյանը:

Հովհաննես Քուչուրեկյան (1837—1890): Բանաստեղծ, ապրել և ստեղծագործել է Ղզլարում:

Նրա բանաստեղծությունները սպառնում են ժամանակի առաջադիմական պարբերականներում՝ Մոսկվայի «Հյուսիսափայլ» (սկսած նրա հիմնադրման օրից՝ 1858 թ. մինչև փակվելը), Բաքվի «Հայկական աշխարհ», Թիֆլիսի «Կոունկ հայոց աշխարհ» ամսագրերում:


Ունենալով միջնակարգ կրթություն նա լավ գիտեր հայոց լեզուն, որը և դասավանդում էր Ղզլարի հայկական երկսեռ դպրոցներում: Մինչև նույն ժամանակ նա ակտիվ հասարակական գործիչ էր:

Հ. Քուչուրեկյանի 'հայանի բանասահգծություններից մեկը՝ «Գերու ձայնը բանաի մեջ» (1861 թ.), որ տպագրված է «Սոխակ Հայաստանի» երգարանում, երգվում էր ժամանակին և լայն տարածում ուներ:

Աշխեն Դուլգյան (1844—1876): Ղզլարի աշքի բնիկ մանկավարժ և հասարակական գործիչ, Հայրը՝ Թիշկ Մարաիրոս Դուլգյան էր, որի մյուս դուստրը՝ Աննան, վիպասան Պ. Պոռլյանի կինն էր: Մայրը՝ Շուշանը սերում էր Սայաթ-Նովայի առհմից:

Սկզբում Աշխենը սովորել է Ղզլարում, իսկ միջնակարգ կրթությունն սաացել է Թիֆլիսի

հայկական օրիորդաց դպրոցում: Ավարտելով դպրոցը, նա վերագառնում է հայրական տուն և իր կարճատև, բայց բեզուն կյանքը ամրոջապես նվիրում է իր ծննդավայրի հայ մանուկ սերնդի դաստիարակման վսեմ գործին: Որպես հասարակական գործիչ Աշխեն Դուլգյանը նույնպես նվիրվածությամբ աշխատում էր Ղզլարի հայ կանաց բարեգործական ընկերության շարքերում:




26. Բժշկապետ Ռոման Միշկելյան:

Աշխեն Դուլգյանի կարճատև կյանքի պամմությունը հեաաքքի է այն տեսակեաից, որ որոշ չափով կապված է Պերճ Պոռլյանի կյանքի ու ստեղծագործությունների հետ: Ինչպես հայտնի է, Պոռլյանը իր բնտանիքով 1872—74 թվականներին ապրել և գործել է իր կնոջ ծննդավայր Ղզլարում:

Հայտնի է, որ «Կովածաղիկ» վեպը Պ. Պոռլյանը նվիրել է իր քննուն՝ Աշխեն Դուլգյանին (որի խորհրդով էլ վեպն անվանել «Կովածաղիկ»):

Ռոման Միշկելյան (1845—1923): Բժշկապետ, ծնվել է Ղզլարում, միջնակարգ կրթությունը ստու-

ցել է Ստավրոպոլի գիմնազիայում, թշկական րարձրադույն կրթությունը ստացել է Պետերբուրգի գինվորական թշկական ակադեմիայում։ Իր գործունեությունն սկսել է հայրենի բազաբում։ Նա մասնակցել է Բուխարայի և Խիվայի արշավանքներին որպես գինվորական թիշկ։ Մահայել է Կիևում, գիվիգիոն թշկի պաշտոնով։ 1898 թ. գններալի ատոիճանով հեռացել է գինվորական ծառայությունից և լիովին նվիրվել իր հայրենի քողաքի հասարակական կյանքին։



27. Գևորգ Բահանա Մկրտումյան։

Որովես հմուտ թիշկ Ռ. Միշկելյանը կարճ ժամանակում մեծ համրավ է ձեռք բրում Ղլլարում, նրա մոտ էին գալիս թշկվելու շրջանի ամենահեռավոր անկյուններից և մոտակա բաղաքներից։

Միշկելյանը և թ. Սուլթանշահը միասին հիմնում են Ղլլարում հիվանդանոց, ուր նրանք աշխատում էին անվճար։ Հիվանդանոցն ագահովվում էր հայոց րարեգործական ընկերության հաշվին։

Միշկելյանը մեծ ջանքեր գործադրեց Ղղլարի հիգիենիկ-սանիաարական վիճակը րարվոքելու համար։ Նրա բուռն գործունեության շնորհիվ

ևր, որ մալարիան հետգհետե սկսեց նահանել Ղլլարից։

Թշկապետը վախճանվեց Ղլլարում 78 տարեկան հասակում։ Ղլլարի համար գա մեծ կոռուստ էր։

Գևորգ Բահանա Մկրտումյան (1861—1915)։ Մեվել է Ղլլարում, նախնական ուսումը ստացել է տեգի հայոց գպրոցում, որն այն ժամանակ կոչվում էր Թեմական։ Ապա սովորում է Թիֆլիսի Ներսիսյան գպրոցում, որը գերազանց ավարտելով, գալիս է Ղլլար և նվիրվում մանկավարժական գործունեության։

Նրա հայրը՝ Պոգոսը, քահանա էր Ղլլարում։ Հոր մահից հետո շատերի թախանձանքին զիջելով, Գևորգը մտնում է հոգեոր ասպարեզ՝ գառնում քահանա իր հոր ծխի վրա։ Նա շէր քաշվում աղաներից, համարձակ խոսքերով եկեղեցու ընմից խարագանում էր հարուստներին, որի պատճառով ունեոր դասակարգը նրան չէր սիրում։ Գանգաաներ գնացին Ասարախան՝ թեմական առաջնորդին և նա հեռացրեց Գևորգին հայոց գրպրոցի ավագ ուսուցչի պաշտոնից։


Այնուհետե նա մեկնում է Աստրախան, այնաեղ ծավալելով հասարակական բուռն գործունեություն։ 1912 թ. նրա պատմվածքների ժողովածուն «Ջրկվածներ» խորագրով լույս տեսավ Աստրախանում։ Նրան են պաականում «Գրչի հանաքներ» և «Ըմրոստ երգեր» ժողովածուները էմիլ կեղծանվան տակ։

Լւսնակ Լալայանց (1870—1933)։ Ռուսաստանի հեղափոխական շարժման ականավոր գործիչներից էր։ Մանկությունը անց է կացրել Ղլլարում, սովորել աեղի աարական գպրոցում, այնուհետե՝ Թիֆլիսի ոեալական գպրոցում, որն ավարաելուց հետո ընգունվել է Կաղանի համալսարանը։ Հեղափոխական գործունեությունը սկսել է 18 ասրեկանից։ 1889 թ. ուսանողական ցույցերին մասնակցելու համար Լալայանցը վարավում է համալսարանից և աքսորվում։ Նա ականիվ գործունեություն է ցուցարերել Նկատերինոսլավում՝ «Բանվոր դասակարգի ագաաագրման միությունը» կաղմակերսելու գործում, մասնակցել է նաև ՌՍԴԲԿ առաջին համագումարի նախապատրաստմանը. խմրագրել է «Южные рабочие» սոցիալգեմոկրաաական անլեգալ թերթը (1900 թ.)։

1902 թ. Լալայանցը ձերրակալվում և աքսորվում է Սիրիր, որաեղից փախչում է արտու-

սահման, ժնկում գլխավորում է «Իսկրայի» տպարանը:

Իս. Լալայանցը 1904 թ. Օդեսայում մասնակցում է բոլշևիկների հարավային կոմիտեների բյուրոյի ձևավորմանը և ղեկավարում այն: Այդ ընթացքում նա մեկնում է արաասահման՝ Վ. Ի.



28. Իսահակ Լալայանց:

Լենինի մոտ և նրան տեղեկացնում հարավային նահանգներում կատարվող աշխատանքների մասին:

Վ. Ի. Լենինը ընդունում է ղեկավարել Լալայանցի գործունեությունը:

Իս. Լալայանցը գործել է ղանադան կեդժանություններով՝ Ինսարով, Իդարով, Հակոր, Լեոն և այլն: 1905 թ. նորից ձերբակալվում և հինգ տարով աքսորվում է Վոլոգդայի նահանգ, որանդից փախչում է Պետերբուրգ: Այստեղ նա շարունակում է կուսակցական գործունեությունը: 1906 թ. Տամբերֆորսի կոնֆերանսում նա հանդես է գալիս «Զինված ապստամբության մեջ կուսակցության դերի» մասին ղեկուցումով:

1908 թ. Իս. Լալայանցը վաճառարանվում է վեց տարի տաժանակրության և ցմահ արաաքսովում հեռավոր Աիրիր:

Միայն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո հնարավոր եղավ գտնել Աիրիրում տառտպող հիվանդ Իս. Լալայանցին: Վ. Ի. Լենինի կարողագրությամբ Իս. Լալայանցին Աիրիրից փոխադրեցին Մոսկվա և հոգ ասարան նրա բուժման ու ապաքինման համար:

1922 թ. Իս. Լալայանցն աշխատում էր Լուսժողկոմատի կադմում:

Արտաշես Ղարիբյան (1881—1905): Բունտահեղծ, ծնվել է Օշականում: 1900 թ. 18—19 տարեկան երիտասարդ, բայց արգեն թոքախտով տառապող Արտաշեսը գալիս է Ղլլտր և աշխատանքի անցնում հայկական երկսեռ դպրոցներում որպես ուսուցիչ: Իր բանաստեղծական տաղանդով շուտով նա գրավում է տեղի հայ հասարակության սերն ու համակրանքը: Սակայն առողջական ծանրացող վիճակը և անհաջող սերը վերջ տվին նրա կյանքին 24 տարեկան հասակում:

Ա. Ղարիբյանի մահից հետո որպես հիշատակ մնացել է նրա բանաստեղծությունների փրնջիկը՝ «Մրմուռ» խորագրով, որը ազագրվել է Պետերբուրգում, 1904 թ.: Ա. Ղարիբյանի գրչին է պատկանում «Որբան ցանկացա մի ալ վարդ քաղել» հանրածանոթ արածված երգը:

Վահան Թավադբեկյան (1875—1961): Ծնվել է Ղլլարում, այստեղ է սաացել իր սկզբնական կրթությունը, ապա ավարտել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Ուսանել է Էջմիածնի հրդեհոր ճեմարանում, որն ավարտել է 1897 թվականին: Ամուսնանում է մողղոկցի հայ աղջկա հետ, ձեռնադրվում քահանա, կնոջ հետ գալիս է Ղլլար և սկսում պաշտոնավարել: Ասավածածնի եկեղեցում: Միևնույն ժամանակ նա կրոնի և հայոց լեզվի դասեր է տալիս Ղլլարի ծխական դպրոցներում:

Երիտասարդ հասակում նա գրել է մի շարք բանաստեղծություններ: 1903 թ. Թիֆլիսում հրատարակվում է նրա բանաստեղծությունների ժողովածուն:

1940 թ. նա գալիս է Երեան, աշխատում գիտությունների ակադեմիայի աամոթյան ինստիտուտում:


1941—46 թթ. Վ. Թավադբեկյանը աշխատում է Ալավերդու շրջանի Շնող գյուղի միջնակարգ դպրոցում որպես գրականության դասաաու:

Նա թարգմանություններ է կաաարել Նադսոնից, Տյուաչից, Պուշկինից և Լերմոնաովից:

Ռոմանոս Մելիքյան (1883—1935): Ո. Մելիքյանի մասին բաղմիցս ղրվել է մեր մամուլում

և կսն մի քանի մենադրություններ՝ նվիրված նրա կյանքին ու գործունեությանը: Բայց մեր նպատակն է տալ նրա մասին մեր հուշերը, որոնք ոչ մի տեղ չեն հրապարակված:

Լինելով ծագումով ղղարցի Ռոմանոս սերունդին կապված է եղել իր ծննդավայրի հետ: Սինչև այժմ էլ ղղարցիները ակնածանքով են



29. Ռոմանոս Մելիքյան:

հիշում Ռոմանոսի արախոսությունները, քուրախ ընավորությունը, մանավանդ նրանք, ովքեր նրա հետ որսի են գնացել Ղղարի մոտերքը: Նա սիրում էր ընությունը և որսորդությունը: Վերջինս նրա համար նպատակ չէր, այլ ուղղակի լուրջ՝ ընությունը մոտիկից շփվելու:

Նա րավմիցս այցելել է Ղղարում ապրող իր ծնողներին:

Ամեն անգամ Ղղար ղալխա նա անպատճառ.

մի րանով պետք է քուրախացներ իր հայրենակիցներին՝ կամ համերգ կազմակերպեր, կամ սիրողների հետ մասնակցեր որե՛ն ներկայացման: Գալուստ Պանճուղյանը իր հուշերի մեջ գրում է, որ Պետերբուրգի կոնսերվատորիայի ուսանող Ռ. Մելիքյանը գալով Ղղար, մասնակցել է «Սուս ճգնավոր» ներկայացմանը:

1905 թ. ամռանը Ռ. Մելիքյանը և Աղատ Մանուկյանը Ղզլարում քառաձայն խումբ են կազմակերպում և համերգ տալիս, մեծ հետաքրքրություն առաջացնելով հասարակության մեջ: Մի այլ անգամ Ռոմանոսը Ղզլար գալով, իր մտերիմ ընկերոջ՝ ջութակահար Դավիթ Սողոմոնյանի հետ համերգներ են կազմակերպում հասարակության համար:

Նրա՝ Ղղար գալու լուրը կայծակի արագությամբ տարածվում էր քաղաքում: Այդ առթիվ ասում էին՝ «Լսե՛լ ես, ասում են՝ Սարափանցի Օվակիմի աղա Ռոմանը եկել ա, կոնցերտ ա տալու»:

Երգեցիկ խմբի փորձերի ժամանակ Ռոմանոս Մելիքյանը որպես ղեկավար պահանջում էր քացարձակ կարգապահություն և լարված ուշադրություն, որով նա կարողանում էր հասնել ամենամաքուր հնչողության:

Նա կյանքից հեռացավ հիսուներկու տարեկան հասակում:

Դավիթ Սողոմոնյան (1885—1935), Հայ ականավոր երաժիշտ: Ծնվել է Ղղարում: Մինչև 12 տարեկան հասակը սովորել է աեղի ուսաց քաղաքային դպրոցում: Այդ շրջանում ծնողները նկատելով նրա հակումն ու սերը երաժշտության նկատմամբ, որոշում են տալ երաժշտական կրթության: Նրա առաջին ուսուցիչն էր Ղղարի նվագախմբի ղեկավարը, որի մոտ նա սովորում է մի ատարի: Այնուհետև, հայրը նրան սովորելու է ուղարկում Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցում, որն ավարտում է 1903 թվականին: Այդ ընթացքում նա մասնավոր գասեր էր վերցնում Ռոստովի երաժշտական դպրոցի դասառուներից մեկի մոտ:

1900 թ. ընդունվում է Ռոստովի երաժշտական դպրոց, ջութակահար Մեցի գասարանը, ուր սովորում է մինչև 1902—1903 ուս. տարվա վերջը: 1903 թ. տեղափոխվում է Պետերբուրգ՝ կոնսերվատորիայում սովորելու համար:

Նյութական սուղ միջոցների և ղինվորական ծառայության պատճառով նա վերագաղտնում է

Ռոստով և շարունակում ուսումը տեղի երաժշտական դպրոցում (որն արդեն վերածված էր կոնսերվատորիայի)։

Ավարտելուց հետո (1907 թ.) նա աշխատանքի է անցնում Նոր Նախիջևանի Գողթյան օրիորդաց դպրոցում իրրև ջութակի զասաառն՝ 1907-ից



30. Դավիթ Սողոմոնյան։

մինչև 1921 թ., այնուհետև աշխատում Նոր Նախիջևանի նորարաց շրջանային երաժշտական դպրոցում։

1921 թ. Երեանի երաժշտական ստուդիայի վարիչ Ռոմանոս Մելիքյանը նրան հրավիրում է Երեան՝ ջութակի գասատուի պաշտոնով։ Սակայն նա ինչ-ինչ պատճառներով գալիս է Երեան միայն 1922 թվականին։

Սողոմոնյանը խոշոր կուլտուրայի տեր երաժիշտ էր։ Նրա ջանքերով կազմակերպվեց Երեանի երաժշտական դպրոցի նվազախումբը և կվարտետը, որոնք կարճ ժամանակում աչքի ընկնող նվաճումների հասան։ Սողոմոնյանի վաստակը մեծ է կատարողական արվեստի ընդգնացմամբ։

Դ. Սողոմոնյանը իր ծննդավայր Ղզլարը եր-

րեք չէր մոռանում։ Ամռան արձանուրդներին երկու մտերիմ ընկերներ անց լին կացնում Ղզլարում։

Ղզլարում հիշում են 1907 և 1912 թվականների նրանց տված համերգները։ Վերջին անգամ Դ. Սողոմոնյանը եղավ Ղզլարում իր կնոջ՝ դաշնակահարուհի Ե. Խոսրովյանի հետ։ Նրանց կազմակերպած համերգի մասին վկայում են այն աֆիշան ու ծրագիրը, որոնց պատճենը գտնվում է գրականության և արվեստի թանգարանում, Դ. Սողոմոնյանի արխիվում։

Դ. Սողոմոնյանը թողել է քառաձայն խմբի համար ձայնագրած ռազմաթրվ ժողովրդական երգեր, որոնց թվում՝ «Արի Մանան», Նոր Նախիջևանի երգը՝ «Ապրջանս», որ հրապարակված է «Գեղարվեստ» ամսագրում։

Հայաստանի լուսժողովրդի րարձր գնահատանքով Դ. Սողոմոնյանի մանկավարժական գործունեությունը, նրան շնորհեց գոցենտի կոչում։ Նա ապրեց համեսա, գործեց առանց աղմուկի և մեծավ մեծ վաստակով։

Դավիթ Մովսիսյան (1889—1964), Ծնվել է Ղզլարում։ Իսկիթը վաղ հասակում զրկվեց ծնողներից և ստիպված եղավ թողնել ուսումը և որպես աշակերտ աշխատել աեղական մի հայ վաճառականի խանութում։ Դավիթը աշխատեց Ղզլարի այգիներում մինչև իր դինվորակոչությունը ցարական բանակ։

1917 թ. սկզբին նա բանակից վերադառնում է իր ծննդավայր և մանում ընդհիվյան կուսակցության շարքերը։ Այդ ժամանակվանից սկսվում է Դ. Մովսիսյանի բուռն գործունեությունը՝ Ղզլարում սովետական կարգեր հաստատելու համար։


Ղզլարում կազմակերպվում է ուղմահեղափոխական կոմիտե՝ կոմունիստ խորոշի զխավորությամբ։ Դավիթ Մովսիսյանը ընարվում է կոմիտեի անգամ և նշանակվում ուղմական գործերի արաակարգ կոմիսար։

Ղզլարը սպիտակ զվարդիականներից ազաագրելու և քաղաքը պաշապանելու գործում նա մեծ գեր իաղաց, նրա ջանքերով էր, որ Ղզլարում 1918 թ. ապրիլին կազմակերպվեց ընդհիվյան առաջին օրաթերթը։

Հյուսիսային Կովկասում սովետական կարգեր հաստատվելուց հետո, կուսակցությունը Դ. Մովսիսյանին ուղարկեց Միջին Ասիա՝ ռասմալների գեմ կովելու։ Քաղաքացիական կոիվներում

ունեցող մեծ հաջողությունների համար Դավիթը մի քանի անգամ պարգևատրվեց շքանշաններով:

1921 թ. սկսվում վերջնական իրագործվեց Դ. Մուխիսյանի վաղուցվա երազանքը՝ ստանալ բարձրագույն կրթություն: Եսթոնիայի Կառնիսկայի համալսարանում սովորելուց հետո նա հեշտությամբ ըն-



31. Դավիթ Մուխիսյան:

դունվեց Մոսկվայի պոլիտեխնիկական ուսումնարան, որն ավարտեց դերադանց և ապա կառուցելապետությամբ Մոսկվայի առևտրական ինստիտուտում:

Երկար տարիներ նա աշխատեց որպես Դոնի Ռոստովի Վոլգայի վերին գոծարանի գլխավոր:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Դավիթը կռվեց տարրեր ռազմաճակատներում որպես հրամանատար և ապա նշանակվեց Լեոնային Ղարաբաղի զինվորական կոմիսար:

Պատերազմից հետո Դավիթը գործուղվում է Սովետական Միության դանադան մարզեր, գործարաններ կառուցելու Մինչև իր կյանքի վերջը (1964 թ.) Դավիթը ղեկավարում էր Կույբիշև քաղաքի խոշոր գործարաններից մեկը: Իր ընդուն-

դործունեության համար նա արժանացավ Լենինի շքանշանի: Վախճանվեց Կույբիշևում, 75 տարեկան հասակում:

Նիկիտ Մկրտչյան (1902), Կոմպոզիտոր Նիկիտ Գրիգորի Մկրտչյանը ծնվել է Ղզլարում: Նրա հայրը այգեգործ էր: Նրանց ընտանիքում ընդունել նվագում էին որևէ գործիքի վրա:

1916 թ. Նիկիտը ընգնվեց Վլադիկավկազի (Օրջոնիկիձե) երաժշտական ուսումնարան (գալատուն էր դաշնակահար Պ. Բ. Մամուլյանը): Երկու տարի անց, նա ընտանեկան պայմաններից Լենինով, թողեց ուսումը և զաւով Ղզլար, կազմակերպեց լարային նվագախումբ, որի համար նա շարագրում էր քայլերգեր և վալսեր: Հետագայում աճելով, նվագախումբը սկսեց ինքնուրույն համերգներ կազմակերպել:



32. Նիկիտ Մկրտչյան:

Ահա այդ ժամանակ էր, որ Ղզլար եկավ հայտնի երաժիշա Ռոմանոս Մելիքյանը, որը լսելով Նիկիտ Մկրտչյանի հորինած երաժշտական նվագները, առաջարկեց հորը՝ իր որդուն ուղարկել Թիֆլիս, երաժշտական կրթությունը շարունակելու:

Թիֆլիսում նիկիտի առաջին գասաաունն հղավ ինքը Ռ. Մելիքյանը (աեսուէթյուն և սուլէի-շիո), որից հետո նա մաավ կոնսերվատորիա:

Թիֆլիսի կոնսերվատորիան ավարանուց հետո ն. Մկրտչյանը ուղարկվեց Մոսկվա՝ երա-ժըշտության մեջ կատարելագործվելու: Նա այնանդ սովորեց մի քանի հայտնի երաժիշտների մոտ (Գլիեր, Յուկերման, Պրոկոֆե և ուրիշներ):

Գալով Թիֆլիսի, ն. Մկրտչյանը սկսեց երա-ժըշտություն գասավանդել գպրոցներում և միաժա-մանակ գրում էր պիեսներ էսարագայի և երա-ժըշտական կոմեգիանների համար:

Նրան իեն պաականում ձնամուս», «Սոս և Վարգիթեր», «Խաթարալա», «Սալաթ-նովա», «Պողոտասար աղրաը», «Մեհապատիվ մուրաց-կաններ» և այլ ներկայացումների երաժշտական ձեւավորումը:

Նա գրել է պիեսներ՝ ջութակի, կլարնետի, փողի և տրոմբոնի համար, սուփաներ՝ լարային և փողային կվարտետների համար, քայլերգեր և վալսեր՝ փողային նվագախմբի համար, երգեր՝ քառաձայն խմբի համար, երգեր՝ Հ. Շիրագի, Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Ս. Վապուտիկ-յանի, Ա. Մերեթելու, Ս. Մարշակի, Տ. Շեվչեն-կոյի խոսքերով: Ն. Գ. Մկրտչյանը Վրացական ՍՍՀ արվեստի վասակավոր գործիչ է:


Գ. Գ. Աղարալյանց (1904—1967): Մնվել է Ղլլարում, գինեգործի ընաանիքում:

Միջնակարգ կրթությունն սաացել է Ռոսաո-վում: Դոնի ինստիտուտում ուսումնասիրել է խա-ղողագործական և ղինեգործական մասնագիաու-թյունը: Ինստիտուտն ավարանուց հետո Աղա-րալյանցը մնաց որպես ասիսենա և իր ուսուցիչ պրոֆ. Ֆրոլով Բագրեկի հետ պոլիտեխնիկական ինստիտուտում կաղմակերպեց գինեգործության ամրիոն, որը գարձավ մասնագետների պաա-րասաման գարրնոց:

Գ. Աղարալյանցը իր ամրողջ գործունեու-թյունը նվիրեց գինու աեխնոլոգիայի և քիմիա-յի պրորլեմներին: 1939 թ. նա սաացավ գյուղա-սնտեսական գիտությունների գոկաորի ասաի-ճան:

Գ. Աղարալյանցը սերտորեն կապված էր Հա-յաստանի գինեգործության և պողարուծության գիտահտաղոաական ինստիտուտի հաա: Նա մեծ թվով գիտական կագրեր է պաարաստել հանրա-պետության համար, օգնել է արաագրությանը և գիտական հիմնաըկներին:

Պրոֆ. Աղարալյանցի ղեկավարությամը մը-շակվեց և արմատավորվեց անընդհատ հոսանքում ավտոմատ եղանակով շամալյն գինիներ արտա-գրելու ըրոքիմիական նոր մեթոդը, որի համար 1961 թ. նա արժանացավ Հենինյան մրցանակի:



33. Գ. Գ. Աղարալյանց:

Վերջին 10 աարում Գ. Աղարալյանցը գեկա-վարում էր սննգարղյունարերության համամիութե-նական հետակա ինստիտուտի ղինեգործության ամրիոնը, փրփրուն գինիների ճյուղային լարորա-տորիան:

Գ. Աղարալյանցն ակտիվորեն մասնակցում էր հասարակական ու ղիաական գաղմաթիվ կաղ-մակերպությունների աշխաաանքներին:

Նա հրապարակել է գինու և կոնյակի հարցե-րին նվիրված ավելի քան 150 աշխատություն: Սր-աագրության մեջ արմատավորվել է կոնյակի, մագերայի և սեղանի գինիների ստացման նրա մշակած աեխնոլոգիան:

Գ. Աղարալյանցը վախճանվեց Մոսկվայում 63 աարեկան հասակում: